# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Արարատ 1-Ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-7 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 7 | Արարատ-1 ՍՊԸ | Արարատ-1 ՍՊԸ | Արարատ-1 ՍՊԸ | Արարատ-1 ՍՊԸ | Համազգեստը բաղկացած է տաբատից, բաճկոնից և կեպիից: Գործվածքի մակերեսային խտությունը առնվազն 210±5 գրամ/մ2, բաղադրությունը` 50±2% պոլիէսթեր, 50±2% բամբակ, մուգ փիրուզագույն (կանաչակապտագույն): Կտորի երանգը նախապես համաձայնեցվում է Պատվիրատուի հետ: Բաճկոնը` միալանջ, կոճկվում է կենտրոնական կոճկվածքով` սև գույնի երկկողմանի տրակտոր տեսակի երիզաշղթայով: Օձիքը` 5+/-0,5սմ լայնությամբ, ծալովի. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Բաճկոնի առաջնամասի կողային հատվածներում ներկարված են մեկական թեք գրպաններ՝ շղթայով փակվող, իսկ կրծքավանդակի մասում 2 ծավալուն գրպաններ՝ կափույրներով: Կափույրները փակվում են դարձերեսին և գրպանների վերնամասում մշակված կպչուն ժապավեններով: Բաճկոնի աստառը սև կամ մուգ փիրուզագույն, մետաքսե գործվածքից: Կրծքամասի գրպանների լայնությունը՝ 14սմ, երկարությունը՝ 16սմ (շեղում +/-2սմ) տեղակայված են կենտրոնական ուղղահայաց կարից 5-6սմ հեռավորության վրա: Կրծքամասի ձախ գրպանի կափույրի վրա՝ ստորին եզրից 1սմ հեռավորությամբ, կարվում են 12X2.5սմ չափսով սև գույնի կպչուն ժապավեն: Ձախ գրպանի կափույրի վրա տեղադրվում է 12.5X2.5 սմ չափով սև գույնի՝ վրան բեժ թելով ասեղնագործված «արյան կարգ» տարբերանշանը։ Աջ թևքին՝ ուսագլխից 7 սմ ներքև, կարված է ՓԾ թևքի ասեղնագործված |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տարբերանշանը: Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում մշակված են 2 կամրջակներ և 2 փակօղակներ: Բաճկոնի կողային ստորին հատվածներում և թևքերի վերջավորություններում գործվածքը մշակված է 5-6սմ լայնության ռետինե ժապավեններով: Բաճկոնի մեջքի կենտրոնական հատվածում՝ օձիքի միացման կարից 13սմ հեռավորությամբ, սպիտակ թելով, 4X2.5X0.3սմ (բարձրություն X լայնություն X հաստություն) չափի տառատեսակով ասեղնագործված է «ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»: Բաճկոնի վրայի բոլոր տարբերանշանները ամրացվում (կարվում) են տարբերանշանի վրա ասեղնագործված եզրակարերին համապատասխան գույներով /բեժ/: Տաբատը՝ ազատթող փողքերով, առաջնամասում 2 կողային ներկարված գրպաններով, հետևի աջ կողմում ներկարված 14X14սմ չափի մեկ գրպանով: Գուլֆիկը շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով: Գոտին մշակված է 7 կամրջակով և |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | գոտու կողային հատվածներում չափը կարգավորող 2 ռեզինե ժապավեններով՝ 13+/-0.5սմ լայնությամբ: Գոտին ամրանում է կոճակով: Կեպին՝ աստառով, կազմված է կոշտ հովհարից, միջնամասից, կողամասերից և հատակից: Կողամասերը մշակվում են առնվազն 3մմ հաստության սոսնձային կտորից միջադիրով: Հովհարը միջադրված է առնվազն 3մմ հաստության պլաստիկ, ճկվող միջադիրով: Գլխարկահատակի կենտրոնում՝ ներսի կողմից, դրոշմվում է չափսը և արտադրողի անվանումը: Հովհարի եզրից 1սմ խորությամբ մշակվում է զարդակար: Հովհարի լայնությունը կենտրոնական մասում՝ 7+/-0,5սմ: Հետնամասում երկկողմանի մշակված է պլաստմասե չափսի կարգավորիչ: Գլխարկաբոլորքի կենտրոնում մշակված է խորհրդանշանը շրջանաձև /կտրամադրվի Պատվիրատուի կողմից/, 56+/-1մմ տրամագծով, սև կտորի վրա ասեղնագործված: Համազգեստի չափսերը կտրամադրվեն պատասխանատու |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Арарат 1 в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом << ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-7 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 7 | | | | | ստորաբաժանման կողմից: Բաճկոնի և տաբատի ներսամասում մշակվում է խնամքի վերաբերյալ պիտակ՝ վրան նշված արտադրողի անվանումը, չափս-հասակը, խնամքի պայմանները: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ մեծ պարկով, յուրաքանչյուր ապրանքատեսակը մեկ թափանցիկ պարկի մեջ: Պարկերի չափսերը պետք է համապատասխանեն ապրանքատեսակի չափսերին: Գլխարկներն առանձին արկղերում պետք է լինեն չդեֆորմացված՝ առանձին շարվածքով: Մատակարարման ժամանակ ներկայացվում է համապատասխանության սերտիֆիկատ՝ գործվածքի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, տրված արտադրողի կողմից մատակարարին: Պարտադիր, մատակարարի հաշվին կատարվում է լաբորատոր ստուգում:Մատակարարումից հետո հայտնաբերված խոտանի դեպքում Մատակարարը պարտավոր է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Պատվիրատուի պահանջով դրանք վերացնել: |